ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 25-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ այս ամսվա ընթացքում թվով արդեն երրորդ քահանայական ձեռնադրությունը:

Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանը քահանայության կոչեց յոթ սարկավագների՝ նրանց շնորհելով հոգևոր նոր անուններ: Գևորգ սրկ. Միրզոյանը վերանվանվեց Տ. Շահան, Հովհաննես սրկ. Ռուշանյանը՝ Տ. Ներսես, Վախթանգ սրկ. Առաքելյանը՝ Տ. Վահան, Հովհաննես սրկ. Հակոբյանը՝ Տ. Վարագ, Սանասար սրկ. Ղուլիկյանը՝ Տ. Տարոն, Մարգիս սրկ. Ցազիչյանը՝ Տ. Ջավեն, և Արտյոմ սրկ. Անանյանը՝ Տ. Շահե:

«...Ձեր պաշտոնավարման սկզբից՝ քառասնօրյա խոկումի և պատրաստության շրջանից հետո առաջին իսկ օրը երբ սկսեք, ջանացեք ձեր կապը անխախտ պահել ձեր ծուխի ու համայնքի յուրաքանչյուր հայի, ամեն հավատավոր զավակի հետ: Հավաքական աղոթքներից, քարոզներից ու հավաքույթներից հետո ամեն մեկ հայի հետ կարողացեք պահել ձեր հարաբերությունը՝ դրոշմելու համար նրանց մտքի և սրտի մեջ քրիստոնեական մեր Ս. Եկեղեցու վարդապետությունը, հայ ժողովրդի դարավոր արժեքները, գիրը, լեզուն և որպես հայ ապրելու կոչումը: ...Ձեր ուսման շրջանը այսօր առավել ևս նոր է սկսվում, որովհետև մինչև այսօր ամբարեցիք, այսուհետև պիտի բաշխեք, ուրիշներին պիտի հասնեք տալու»,- իր պատգամը նորընծաներին ուղղեց Տարոն Սրբազանը (տե՛ս էջ 27):

Նույն օրը, երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաև վեղարի տվչության արարողություն: Տ. Տարոնը, Տ. Ջավենը և Տ. Շահենը, որպես կուսակրոն քահանաներ, ստացան վեղար՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

2005 թվականին ձեռնադրվել է արդեն 26 հոգևորական, որոնցից 23-ը՝ սեպտեմբեր ամսին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ. Տ. ՏԱՐՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆՈՎ ՕԾՈՒՄ Է ՁԵՌՆԱԴՐՎՈՂ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

«ՀՐԱԺԱՐՈՒՄՆ»